ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Զերդ Սրբություն,

Ընդունեք իմ սրտալի երախտագիտությունը Ձեր ջերմ, հայրական տրամադրվածությամբ համակված նամակի համար, որով Դուք շնորհավորել եք ինձ Միտրոպոլիտական աստիճանի բարձրանալու համար: Մեր հաստատության աշխատանքի Ձեր բարձր գնահատականը հատկապես նշանակալից է ինձ և իմ աշխատակիցների համար: Ձեր ուշադրությունը մեզ համար արտակարգ թանկ է: Այն տասնապատկում է մեր ուժերը և մեզ տալիս է վստահություն եկեղեցական այն աշխատանքի օգտակարության համար, ինչ մենք առաջին անգամ ենք իրականացնում:

Մենք բոլորս համակված ենք մեծ ցանկությամբ հասնել հոգևոր մեծ սերտության Հայաստանյայց Առաքելական և Ռուս Պրավոսլավ Եկեղեցիների միջև, որպեսզի համատեղ ծառայենք Աստծուն և մարդկանց:

Խնդրում եմ Ձերդ Սրբության աղոթքները:

Անկեղծորեն նվիրված Ձեզ ի Քրիստոս՝ Հարուցեալ Փրկիչ, Միածին Որդի Աստուծո:

ՊԻՏԻՐԻՄ
ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՎՈԼՈԿՈԼԱՄՍԿԻ ԵՎ ՅՈՒՐԵՎԻ

Մոսկվա